Ադրեսայի Լուսժողկոմատի
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՄԻՋԵՆԱԿԵՐՊ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐՋՈՒԹՅՈՒՆ

Арм.
3-3950
ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ИНВ. № 14188

371:2
Դ-92

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ադրեսայի Լուսժողկոմատի
ԲԱԳՈՒ — 1940

47.920

1549-92

Խմբագրեց՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Сдано в набор 20/XI 1939 г.
Подписано к печати 19/II 1940 г.
1¹/₄ печ. лист. 60.012 тип. знак.

Главлит 164. Заказ № 2952. Тираж 800.
Типография „Красный [illegible] Баку, улиц[illegible] [illegible]ого пионера, 84.

71.2
Ա-32
4 APR 2013
2802-10
ОБЯЗАТЕЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР

ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սովորողների ուսուցման և դաստիարակման գործում դպրոցի առաջ դրված պատասխանատու խնդիրները դպրոցի դիրեկտորից (վարիչից) և ուսուցիչներից պահանջում են ուսումնա-դաստիարակչական աշխատանքի կազմակերպման բացառիկ պարզորոշություն։

Դրան նպաստում է դպրոցական աշխատանքի ճիշտ պլանավորումը։

«Պլանով աշխատել—նշանակում է իմանալ, թե ինչ պետք է անել և ինչ նպատակի համար» (Համկ(բ)Կ XVIII կուսհամագումարում ընկ. Մոլոտովի արած զեկուցումից)։

Դպրոցի ամբողջ աշխատանքի պլանավորումը հնարավորություն է տալիս սահմանելու ուսումնա-դաստիարակչական գործի լավացման կոնկրետ միջոցառումներ և ապահովում է միասնական նպատակասլացություն ամբողջ ուսուցչական կոլեկտիվի աշխատանքում։

Ուսուցչի աշխատանքի պլանավորումն ոգնում է ծրագրի ուսումնական նյութը ժամանակին ուսումնասիրելուն և, լավացնելով ուսուցչի նախապատրաստությունը դասին, ոժանդակում է դասի վորակի ու սովորողների առաջադիմության բարձրացմանը։

Պլանավորման գործունեությունը ձեռք է բերվում հիմնական միջոցառումների ընտրությամբ, դրանց բովանդակության կոնկրետությամբ և դրանց ժամանակին կատարումով։

Ղեկավարվելով այս դրույթներով, դպրոցի յուրաքանչյուր դիրեկտորը (վարիչը) պետք է ամբողջ լրջությամբ վերաբերվի դպրոցական աշխատանքի պլանավորմանը։

Յուրաքանչյուր դպրոցում պետք է լինեն հետևյալ պլանները.

1. Դպրոցի աշխատանքի պլանը (վորը և դիրեկտորի (վարիչի) աշխատանքի պլանն է)։

2. Ուսուցիչների աշխատանքի պլանները. ա) որացույցային պլանը և բ) դասի թեմատիկական պլանը։

1. ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԸ

Դպրոցի աշխատանքի պլանը կազմված է յերկու մասից.

ա) դպրոցի՝ նոր ուսումնական տարվա նախապատրաստության պլան,

բ) ուսումնա-դաստիարակչական պլան։

Այս և այն դեպքում պլաններին նախորդում է փոքրիկ ներածական, վորտեղ ցույց են տրվում դպրոցի հիմնական խնդիրները, յելնելով նրա նախորդ աշխատանքից։

Դպրոցական պլանի առաջին մասը կազմվում է չորրորդ քառորդի սկզբում։

Դպրոցական պլանի յերկրորդ մասը կազմվում է ըստ կիսամյակների. 1-ին կիսամյակի համար (մինչև ձմեռային արձակուրդները) ոգոստոսի 20-ից վոչ ուշ, 2-րդ կիսամյակի համար (հունվարից մինչև ուսումնական տարվա վերջը) հունվարի 5-ից վոչ ուշ։

Դպրոցի աշխատանքի պլանը կազմվում է հետևյալ ձևով.

Հերթական թիվը	Աշխատանքի բաժինները	Աշխատանքի կոնկրետ բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու կատարողները	Նշումներ կատարման մասին

Այս ձևը պարտադրում է պլանը կազմողներին, վոր պլանը լինի հակիրճ, կոնկրետ, կենսական և վերահսկման համար հեշտ։

Դպրոցի աշխատանքի պլանը կազմելու համար պատասխանատու յե դպրոցի դիրեկտորը (վարիչը)։ Պլանի առանձին մասերը կազմելուն մասնակից են արվում ուսուցիչները և դպրոցի այլ աշխատակիցներ։

Դպրոցի աշխատանքի համար կազմված պլանը քննարկվում և հաստատվում է մանկավարժական խորհրդում (յեր քից վոչ պակաս ուսուցիչներ ունեցող տարրական դպրոցում—մանկավարժական խորհրդակցությունում) և հաստատվում է նրա կողմից։

Հաստատված պլանի կատարումը սիստեմատիկաբար ստուգվում է դպրոցի վարչության և դպրոցական տեսուչների կողմից։

Ա. Նոր ուսումնական տարվա համար դպրոցի նախապատրաստության պլանի հիմնական բովանդակությունը

Այս պլանում նախատեսվում են նոր ուսումնական տարվա համար դպրոցի ամենալավ նախապատրաստությունն ապահովող միջոցառումները, այսինքն՝

1) Ամառային աշխատանքը յերեխաների հետ։
2) Պարտուսի ապահովումը։
3) Դպրոցը կադրերով ապահովելը։
4) Դպրոցական շենքի նախապատրաստությունը։
5) Դպրոցն ուսումնական ձեռնարկներով և տնտեսական պարագաներով կահավորելը։

Ամառային աշխատանքը յերեխաների հետ նախատեսվում է պլանում հետևյալ միջոցառումներով.—աշխատանք մերձդպրոցական հրապարակում, պիոնեական ճամբարում, աշխատանք աշնանային վերաքննություն ունեցող աշակերտների հետ։ Յեթե դպրոցն ունի գյուղատնտեսական ուսումնական հողամաս, պլանում նշվում են այդ հողամասում կատարվելիք աշխատանքի հետ կապված միջոցառումներ։

Բոլոր նշված հարցերից արտակարգ նշանակություն ունի աշնանային վերաքննություն ունեցող աշակերտներին կազմակերպված ոգնություն ցույց տալու խնդիրը։ Այդ աշխատանքին պետք է նայել վորպես յերկրորդ տարեցիության դեմ պայքարելու կարևորագույն միջոցառումներից մեկի վրա։

Ուսումնական տարին կազմակերպ սկսելը կախված է ուսուցչական կադրերի ժամանակին ընտրելուց և տեղաբաշխումից։ Դրա համար «կադրեր» բաժինը պլանավորելով անհրաժեշտ է նախորոք ամբացնել դասարանը կամ առարկան ուսուցիչներին, վորպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ ամառվա ընթացքում կարողանալով նախապատրաստվել նոր ուսումնական տարվա համար։ Դրա հետ միասին անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ժողկոմբինատի միջոցով անհրաժեշտ դասատուներ հավաքագրելու համար։

Անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել պարտուսի գծով տարվող աշխատանքի պլանավորմանը, հատկապես աղջիկներին ուսումով ընդգրկելուն։

Յելնելով դպրոցի աշխատանքի կոնկրետ պայմաններից, պարտուսի պլանում նշվում են հետևյալ միջոցառումները. ա) դպրոցում սովորելու յենթակա աշակերտների հաշվառման անցկացում (ինչպես, յերբ և ում միջոցով է հաշվառքն անցկացվելու),

ը) աշխատանքը աշակերտների ծնողների հետ (կոլտնտեսության, գյուղխորհրդի, շրջ(քաղ) խորհրդի հետ և այլն)—ուսման առաջին որը սովորողների լիովին ներկայությունն ապահովելու նպատակով (ծնողական ժողովներ, ծնողներին ծանուցելը և այլն), դ) դպրոցական պարապմունքների նորմալ ընթացքն ապահովող միջոցառումներ (ոգնել ծնողներին դասագրքեր ու տետրակներ գնելու, կազմակերպել յերեխաներին դպրոց փոխադրելը, դպրոցից հեռու ապրող յերեխաների համար հանրակացարանի և ինտերնատի կազմակերպումը և այլն)։

Նոր ուսումնական տարում ուսումնական պարապմունքների նորմալ ընթացքը սերտորեն կապված է դպրոցական շենքը ժամանակին ձմեռվան պատրաստելուց և դպրոցը ժամանակին ուսումնական ձեռնարկներով ու տնտեսական ինվենտարով ապահովելուց։

Այդ նպատակների համար անհրաժեշտ է պլանի մեջ նախատեսել վերանորոգման աշխատանքները, վառելիքի պատրաստությունը, ուսումնական-դիտողական պարագաների, ուսումնական և տնտեսական կահավորման նորոգումը և ձեռք բերումը։

Վոչ լրիվ ու լրիվ միջնակարգ դպրոցներում, ուսումնական և տնտեսական կահավորման թվարկման փոխարեն պլանում նշվում է այդ կահավորումը ձեռք բերելու միմիայն գումարը (ուսումնական կահավորման գծով գումարը ցույց է տրվում ըստ յուրաքանչյուր առարկայի՝ առանձին), իսկ դրա ցուցակը տրվում է վորպես պլանի հավելված։

Բ. Ուսումնա-դաստիարակչական աշխատանքի պլանի հիմնական բովանդակությունը

Ուսումնա-դաստիարակչական աշխատանքի պլանում պետք է արտացոլվեն հետևյալ խնդիրները։

1. Ուսումնա-դաստիարակչական աշխատանքի կազմակերպումը։
2. Դպրոցի ղեկավարումը։
3. Աշխատանքն ուսուցչի հետ։
4. Պիոներական և աշակերտական կազմակերպությունների աշխատանքը։
5. Արտադասարանային աշխատանքը։
6. Արտադպրոցական աշխատանքը։
7. Դպրոցի կապը ծնողների հետ։
8. Սանիտարական-առողջարարական աշխատանքը։

9. Կազմակերպչական-տնտեսական աշխատանքը։

Այս բաժինները պլանավորելիս անհրաժեշտ է նշել ամենահիմնական հարցերը և դրանք մաքսիմալ չափով կոնկրետացնել։

Պլանի առաջին խնդրի վերաբերյալ անհրաժեշտ է գործադրել մի շարք միջոցառումներ՝ ուսումնա-դաստիարակչական աշխատանքը ճիշտ կազմակերպելն ապահովելու նպատակով. այսինքն՝ կոնկրետ միջոցառումներ առանձին ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու ընդավառում. միջոցառումներ աշակերտների կոմունիստական դաստիարակության և կարգապահության ամրապնդման համար. միջոցառումներ գարնանային քննությունները նախապատրաստելու համար (յերկրորդ կիսամյակի պլանում)։ Որինակ՝ ռուսերեն լեզվից 5-րդ դասարանի աշակերտները նախընթաց տարվա նյութը թերի յեն յուրացրել. հետևաբար անհրաժեշտ է պլանի մեջ նշել (իսկ աշխատանքի ընթացքում հետևել) այնպիսի միջոցառումներ, ինչպես նախընթաց տարիներին անցած նյութի սիստեմատիկ կրկնողություն, անհատական առաջադրանքներ, կոնսուլտացիաներ և այլն։

Պլանի մեջ նման միջոցառումներ նշվում են այդ բաժնի նաև մյուս առարկաների ու հարցերի նկատմամբ։

«Դպրոցի ղեկավարումը» բաժնում առաջին հերթին անհրաժեշտ է նշել մանկավարժական խորհրդի (տարրական դպրոցում յերեքից վոչ պակաս ուսուցիչ լինելու դեպքում—մանկավարժական խորհրդակցության) աշխատանքի և ուսուցչի աշխատանքը վերահսկելու կոնկրետ հարցերը։

Մանկավարժական խորհրդի (խորհրդակցության) աշխատանքի պլանում անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել մանկավարժական փորձի փոխանակությանը։

Առանձին մանկավարժական խնդիրներ ավելի խորն ուսումնասիրելու նպատակով դրանք նախորոք կարող են քննարկվել ուսուցիչների մեթոդ-միավորումների նիստերում, վորից հետո դրվում են մանկավարժական խորհրդի (խորհրդակցության) քննարկման. այստեղ տվյալ խնդրի առթիվ համապատասխան վորոշում է ընդունվում։

Ուսուցիչների աշխատանքը վերահսկելու գործում պլանի մեջ նախատեսվում են մանկավարժական խորհրդում (խորհրդակցությունում) ուսուցիչների հաշվետվությունների ժամկետները, դպրոցի դիրեկտորի (վարիչի) և ուսումնական մասի վարիչի կողմից դասերին հաճախելը և այլն։

Ուսուցչի հետ տարվող աշխատանքի վերաբերյալ միջոցառումներ պլանավորելիս պետք է նշել մեթոդական աշխատանքի, սոցիալիստական մրցության (ում հետ պետք է դպրոցը մրցի, հաշվառման ժամանակը և ձևը), ուսուցիչների քաղաքական մակարդակի ու նրանց մանկավարժական վարպետության բարձրացման (ուսուցիչներին գրականությամբ ապահովելը, ոգնություն հեռակա յողներին և այլն) և դասղեկների հետ աշխատանք տանելու (վոչ լրիվ և լրիվ միջնակարգ դպրոցներում) կոնկրետ հարցերը։

Դասղեկների աշխատանքի վրա անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել, քանի վոր նրանց ճիշտ ղեկավարելուց են մեծ չափով կախված աշակերտների առաջադիմությունը և վարքը, նույնպես դպրոցի կարգապահությունը։

Մեթոդական աշխատանքի գծով, թեմատիկայից ու առարկայական հանձնաժողովների (միջնակարգ դպրոցում) և ուսուցիչների դասարանական մեթոդմիավորումների (տարրական դպրոցում յերեքից վոչ պակաս ուսուցիչ լինելու դեպքում յուրաքանչյուր դասարանի համար) աշխատանքի ժամկետներից բացի, պլանում նախատեսվում են կոնսուլտացիաներ, բաց դասերի կազմակերպում, փոխադարձաբար դպրոցների հաճախում, մանկավարժական կաբինետների հաճախում և այլն։

Պիոներական և աշակերտական կազմակերպությունների աշխատանքի հարցերի գծով պլանում նախատեսվում են միջոցառումներ աշակերտների քաղաքական դաստիարակության ուղղությամբ (ընթերցումներ, զրույցներ և այլն), պիոներական և աշակերտական կազմակերպությունների աշխատանքի բովանդակության հիմնական հարցեր, միջոցառումներ սոցմրցման ուղղությամբ և աշակերտների հասարակական աշխատանքի տեսակներ։

I—IV դասարանների աշակերտների հետ տարվելիք աշխատանքի միջոցառումները նշելով, դպրոցը պետք է խիստ կերպով առաջնորդվի «Հասարակական-քաղաքական առաջադրանքներով դպրոցականների և պիոներների ծանրաբեռնվածության մասին» Համ(ք)Կ Կենտկոմի 1934 թ. ապրիլի 20-ի վորոշումով։

Այս բաժինը պլանավորելիս դպրոցի առաջ խնդիր է դրվում բարելավել աշակերտների քաղաքական դաստիարակության դրվածքը և կազմակերպել համախմբված մանկական կոլեկտիվ, վորպես դպրոցի հաջող աշխատանքի կարևորագույն պայմաններից մեկը։

Աշակերտների հետ արտադպրոցական և արտադասարանային

աշխատանքի ճիշտ կազմակերպումը դաստիարակչական և կրթական մեծ նշանակություն ունի։

Այդ նպատակով անհրաժեշտ է ամենալուրջ ուշադրությունը դարձնել այդ աշխատանքի կազմակերպման վրա և պլանում նախատեսել՝

ա) արտադասարանային աշխատանքի գծով՝ հանրակրթական (V—X դասարաններում), դեղարվեստական, ֆիզկուլտուրային և այլ խմբակների կազմակերպում, աշակերտների արտադասարանային ընթերցանության (գրադարանի աշխատանք) կազմակերպում, պաշտպանական աշխատանքի հիմնական միջոցառումներ, հակակրոնական դաստիարակության համար տարվող աշխատանքի ձևերն ու բովանդակությունը, ինտերնացիոնալ դաստիարակության աշխատանքը, հեղափոխական տոների անցկացման միջոցառումներ, պատի թերթեր լույս ընծայելու աշխատանքը և այլն։

բ) արտադպրոցական աշխատանքի գծով՝ կինոյի, ակումբների, գրադարանի ոգտագործման վերաբերյալ միջոցառումներ, ինչպես ուսման ժամանակ, այնպես և արձակուրդների ընթացքում։

Դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքի բարձր վորակի համար մղվող պայքարում կարևորագույն դեր և խաղում դպրոցի և ընտանիքի ճշգրիտ փոխադարձ կապը։ Դրա համար յուրաքանչյուր դպրոց պետք է հատուկ ուշադրություն դարձնի ծնողների հետ ունեցած կապին, պլանում նախատեսելով ծնողական ժողովներ անցկացնելու թեմատիկան և ժամկետները, աշխատանքը ծնողական կոմիտեի և ծնողական ակտիվի հետ, մանկավարժական պրոպագանդայի հարցերը (կոնսուլտացիաներ, դասախոսություններ դպրոցում, կոլոնտեսություններում և այլն)։

«Դպրոցի սանիտարական-առողջարարական աշխատանքը» բաժնի գծով պլանում նշվում են այնպիսի միջոցառումներ, ինչպես բժշկի պրոֆիլակտիկ ու սան-առողջարարական աշխատանքը (աշակերտների բժշկական քննություններ, նախապահպանողական օրկուսներ և այլն), դպրոցական շենքի սանիտարական խնամքի ապահովումը։

Դպրոցի տնտեսական-կազմակերպչական աշխատանքի հարցերի վերաբերմամբ պլանում նշվում են դպրոցի գրադարանի ընթացիկ համալրումը ուսումնական-դիտողական պիտույքներով ու գրքերով, կաբինետների լրիվ կահավորումը (միջնակարգ դպրոցում), դպրոցական ինվենտարի և դպրոցական շենքի ընթացիկ վերա-

նորոգման միջոցառումներ, դպրոցական գույքի ինվենտարիզացիա (ժամկետները) և այլն։

Այս ձևով է պատկերանում դպրոցի աշխատանքի պլանի սխեման։ Կոնկրետացնելով այն, դպրոցը կունենա աշխատանքի ոպերատիվ պլան, վորը կոդնի դպրոցի դիրեկտորին (վարիչին) դպրոցը ղեկավարելու խնդրում։

Առաջին կիսամյակի համար դպրոցի ուսումնական-դաստիարակչական պլանը կազմելու հետ միաժամանակ կազմվում են մի շարք դոկումենտներ, վորոնք անհրաժեշտ են դպրոցին դպրոցական պարապմունքների հենց առաջին որից սկսած։ Այդ դոկումենտները հետևյալներն են. ա) դպրոցի դասացուցակը, բ) աշակերտների հետ տարվելիք արտադասարանային-արտադպրոցական աշխատանքի ցուցակը, գ) աշակերտների վարքի կանոնները, դ) դպրոցի աշխատողների ներքին կարգ ու կանոնները և յե) դպրոցում ուսուցիչների հերթապահության ցուցակը։

Աշխատանքի պլանի կատարումը, առանձնապես ուսուցիչների աշխատանքը վերահսկելու նպատակով նպատակահարմար է, վորպեսզի դպրոցի դիրեկտորը (վարիչը) և ուսումնական մասի վարիչը որատետրեր պահեն։ Այդ որատետրերում նշվում են որվա կոնկրետ միջոցառումները և դրանց կատարումը։ Նպատակահարմար է, վորպեսզի այդպիսի որատետրեր պահեն նաև ուսուցիչները, դասղեկներն ու դրադարանի աշխատողները. այդտեղ դրի յեն առնվում որվա այն միջոցառումները, վոր պիտի անցկացվեն աշակերտների հետ, բացի ուսումնական աշխատանքից (ժողովներ, դրույցներ առանձին աշակերտների հետ, խմբակային աշխատանքներ և այլն)։

2. ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Ուսումնական-դաստիարակչական աշխատանքի հաջողությունը ամենից առաջ կախված է հենց ուսուցչից, դասավանդելու նրա կարողությունից, դասի բարձր վորակից։

«Դասի ժամանակ աշակերտը պետք է հասկանա նյութը։ Դասից նա պետք է դուրս գա գիտելիքների վորոշակի պաշարով։ Յեթե դասը լավ չե դրված, տանն աշակերտի աշխատանքը արդյունավետ լինել չի կարող։

Այստեղից բղխում են ուսուցչի պարտականությունները դասի ժամանակ.—առարկան իմանալու խորությունն ու լրջությունը, նյութը հրաժցնելու, այդ նյութի նկատմամբ դպրոցականի մեջ հետաքրքրություն և հաշակ առաջացնելու կարողությունը։

Դասը ուսուցչի աշխատանքում պետք է լինի ամենաստեղծագործական մոմենտը»։ («Պրավդա»-ի 1938 թ. նոյեմբերի 20-ի առաջնորդողից)։

Այդ հատկություններով են ընութագրվում գերազանցիկ ուսուցիչների դասերը. նույնպիսի արդյունքների կարող է հասնել յուրաքանչյուր ուսուցիչ, պայմանով, յեթե նա ամենաբարեխիղճ վերաբերմունք է ցույց տալիս դասին նախապատրաստվելուն։

Պլանավորումը դասի նախապատրաստության կարևորագույն մոմենտներից մեկն է։

Ուսուցչի աշխատանքի պլանավորումը կատարվում է պետական ծրագրերի, մասնագիտական և մեթոդական գրականության սիստեմատիկ ուսումնասիրության ընթացքում՝ ինչպես ամբողջ ծրագրային նյութի, նույնպես և տվյալ դասի համար։

Ուսումնական նյութի խորը և կանխավ յուրացումը ուսուցչի կողմից, մեթոդական պրիոմների նախապատրաստումը, ուսումնական կահավորության ժամանակին պատրաստելն ուսումնական աշխատանքի ճիշտ պլանավորման անհրաժեշտ նախադրյալներն են հանդիսանում։

Ինչպես նշվեց վերևում, ուսումնական աշխատանքի նախապատրաստման և դրա պլանավորման հետևանքով յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա՝ 1) որացույցային պլան և 2) դասի թեմատիկական պլան։

Ա. Որացույցային պլան

Որացույցային պլանը պատասխանատու փաստաթուղթ է, քանի վոր նա ոգնում է ծրագրային նյութը խիստ սիստեմով և ճիշտ սահմանված ժամկետներում ուսումնասիրելուն։ Դրա համար վերջինի առկայությունը յուրաքանչյուր ուսուցչի մոտ պետք է պարտադիր համարել։

Որացույցային պլանը կազմվում է քառորդի համար, յուրաքանչյուր առարկայի գծով առանձին-առանձին։ Այդտեղ ցույց են տրվում ծրագրի բաժինները (թեմաները) և յենթաբաժինները (յենթաթեմաները) դրանց հետևողական ուսումնասիրման կարգով, վորոշվում է յուրաքանչյուր յենթաբաժնի ուսումնասիրման համար անհրաժեշտ ուսումնական ժամերի (դասերի) քանակը և սահմանվում են բաժնի (թեմայի) ուսումնասիրման որացույցային ժամկետները։ Որացույցային պլանում նշվում են եքսկուրսիաների թեմատիկան ու ժամկետները. մայրենի լեզվի, գրականության և մաթեմատիկայի նկատմամբ նշվում են ստուգողական

դրավոր աշխատանքների թեմատիկան ու դրանք կատարելու ժամկետները։

Ծրագրի յուրաքանչյուր բաժնի ուսումնասիրությունից հետո որացույցային պլանում նշվում է կատարման մասին։

Որացույցային պլանը պատկերացվում է մոտավորապես հետևյալ կերպ.

Թվաբանություն IV դասարան

Քառորդ	Ծրագրի բաժիններ (թեմաներ), յենթաբաժիններ (յենթաթեմաներ)	Ժամերի քանակը	Ծրագրի բաժինների (թեմաների) ուսումնասիրման որացույցային ժամկետները	Դիտողություն կատարման մասին
III	Թվերի բաժանելիությունը . .	20	13/I — 29/I	
	1. Բաժանելիության նշանները	8		
	2. Ամենամեծ ընդհանուր բաժանարարը	5		
	3. Ամենափոքր բազմապատիկը	5		
	4. Ստուգողական աշխատանք ամբողջ բաժնից	1	31/I	
	5. Աշակերտների ստուգողական աշխատանքներում յեղած սխալների վերլուծում . . .	1	1/II	

Որացույցային քառորդային պլաններ կազմելիս անհրաժեշտ է յելնել ՍՍՀՄ Լուսժողկոմատի հաստատած տարեկան (կիսամյակային) ծրագրից։

Մի շարք ծրագրերում ցուցումներ են տրված ուսումնական նյութի ժամաբաշխման մասին։ Որացույցային պլանները կազմելիս այդ ցուցումներով պիտի առաջնորդվել վորպես որինակելի։ Հաշվի առնելով տվյալ դասարանի աշխատանքի առանձնահատուկ կողմերը (աշակերտների պատրաստության աստիճանը, նախորդ աշխատանքի թերությունները շտկելու նպատակով ծրագրի այս կամ այն բաժնի նկատմամբ պարապմունքներն ուժեղացնելու անհրաժեշտությունը և այլն), ուսուցիչը կարող է այս կամ այն փոփոխությունը մտցնել նյութի որինակելի ժամաբաշխման մեջ, վորը տրված է Լուսժողկոմատի ծրագրերում, սակայն դա չպետք է նշանակի ուսումնական նյութը լիովին և վորակավոր ուսումնասիրելուն։

Ծրագրի կատարումը և դիտելիքների ամրությունը ուսուցիչը պետք է ապահովի բոլոր պայմաններում։

Որացույցային պլանը կազմելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել, վորպեսզի յուրաքանչյուր ուսումնական քառորդում լրիվ չափով ապահովվի անցած նյութի հիմնովին կրկնողությունը։

Առաջին քառորդի որացույցային պլանը ներկայացվում է դպրոցի դիրեկտորին (վարիչին) ոգոստոսի 25-ից վոչ ուշ, յերկրորդ քառորդի համար՝ նոյեմբերի 5-ից վոչ ուշ, յերրորդ քառորդի համար՝ հունվարի 5-ից վոչ ուշ և չորրորդ քառորդի համար՝ ապրիլի 1-ից վոչ ուշ։

Դպրոցի դիրեկտորը (վարիչը) ստանալով որացույցային պլանները, պարտավոր է յուրաքանչյուր ուսուցչի և ուսմասվարի (վոչ լրիվ և լրիվ միջնակարգ դպրոցներում) ներկայությամբ մանրամասն քննել դրանք, անհրաժեշտ ուղղումներ մտցնել դրանց մեջ և հաստատել։ Հաստատված որացույցային պլանի մի որինակը պետք է լինի դասատվի մոտ։

Ուսուցիչը դպրոցի դիրեկտորի (վարիչի) գիտությամբ, անհրաժեշտ դեպքում (ուսուցչի հիվանդություն և այլն) կարող է որացույցային պլանում այս կամ այն փոփոխությունը մտցնել։

Բ. Դասի թեմատիկական պլանը

Կազմելով քառորդի համար աշխատանքի որացույցային պլանը, դասատուն կազմում է դասերի կոնկրետ պլան տվյալ քառորդի ծրագրի ամբողջ առաջին թեմայի վերաբերյալ։

Հետագայում դասերի պլանները կազմվում են այսպես.—հերթական թեման բաժանվում է առանձին դասերի, առաջին դասերի համար կազմվում են կոնկրետ պլաններ. այդ դասերի նյութի ուսումնասիրության համապատասխան, դասերի հետագա թեմաների բովանդակությունը կոնկրետացվում է այն հաշվով, վոր միշտ մեկ—յերկու դասի կոնկրետ պլանը նախորդ կազմված լինի։

Դասի կոնկրետ պլանը կազմելիս ուսուցիչը պետք է լրջորեն մտածի դասի բովանդակության վրա, ծանոթանա դասագրքի և ուրիշ ձեռնարկների նյութի հետ, մտածի դասի աշխատանքի կազմակերպման և գործադրվելիք մեթոդների մանրամասնությունների վրա, պատրաստի անհրաժեշտ դիտողական պարագաներ, ստուգի նրանց պետքական լինելը, նախորդ փորձեր կատարի, յեթե դասի ժամանակ ցուցադրում և լինելու, վարժություններ, յեթե դասի ժամանակ ցուցադրում և լինելու,

թյուններ կատարելու համար նյութեր ընտրի, նշի այն աշակերտների ազգանունները, վորոնց գիտելիքներն ստուգվելու յեն դասի ժամանակ և մտածի աշակերտներին տնային աշխատանք տալու առաջադրությունների վրա։

Ուսուցչի կազմած պլանն այդ պայմաններում կոգնի նրան դասը համոզված, բովանդակալից անցկացնելու, յուրաքանչյուր բոպեն առավելագույն չափով և սովորողների համար զգալի արդյունքներով ոգտագործելով։

Դասի պլանում առաջ դրվում է դասի թեման. որինակ՝ «զերոյով վերջացող յեռանիշ թվերի բաժանումը միանիշ թվի վրա»։

Թեմայի այսպիսի ձևակերպումը ճիշտ չէ, անորոշ է և մի ժամվա համար շատ։ Ցեվ, ընդհակառակը, դասի թեման այնպիսի ձևակերպումով, ինչպես՝ «զերոյով վերջացող յեռանիշ թվերի բաժանումը միանիշ թվի վրա, յերբ հարյուրավորները և տասնյակները առանձին-առանձին բաժանվում են միանիշ թվի վրա», պարզ է և հասկանալի։

Պետք է խուսափել դիմազուրկ դասերից, վորոնց թեման ձևակերպվում է մի բառով.—«շարունակություն» կամ «կրկնություն»։ Այսպիսի դասերը հաստատում են ուսուցչի՝ դասին անպատրաստ լինելը և ուսումնական ժամերն ապարդյուն ծախսելու պատճառներից մեկն են հանդիսանում։

Դասի թեման գրելուց հետո, ուսուցիչը պլանում նշում է դասի ընթացքը, համառոտ նկարագրելով աշխատանքի ձևերն ու բովանդակությունը մեթոդական հետևողականությամբ։ Որինակ.—

Թվաբանություն—հունվարի 25-ին։

Դասի թեման.—«Ծանոթացնել աշակերտներին բազմանիշ թիվը յերկանիշ թվի վրա բաժանելու հետ»։

1. Տնային աշխատանքի ստուգում։

2. Նոր նյութի բացատրության համար նախապատրաստական վարժություններ. որինակների բանավոր լուծում (ամբողջի վրա և մնացորդով) յերկանիշ և յեռանիշ թվի բաժանումը յերկանիշ թվի վրա (80 : 16, 72 : 24, 45 : 12, 120 : 24, 155 : 26)։

3. Բաժանման նոր դեպքի բացատրումն որինակների լուծումով (912 : 24, 864 : 36, 4408 : 58, 6975 : 75, 8976 : 68)։

4. Վարժություններ որինակների և բաժանման հենց նոր բացատրված դեպքի վերաբերյալ մի խնդրի լուծումով (որինակներ խնդրագրքից №№_____, խնդիր №_____)։

5. Տնային աշխատանք.—լուծել վարժությունների յերկրորդ սյունյակի №№_____։

Մի որինակ ևս.

Կենդանաբանություն—VI դասարանում։

Բաժին—«Պարզակերպների տիպարները»։

1-ին դաս.

Դասի թեման.—«Կանաչ եվգլենան, վորպես ծովամոմայլենների ներկայացուցիչ»։

1. Նախորդ դասի վերաբերյալ հարցումներ աշակերտներին (կենդանիների դասակարգման հիմնական սիստեմատիկ միավորները)։

2. Պատմել «պարզակերպների» հայտնաբերումը Լեվենգուկի կողմից (միկրոսկոպի դերը այդ հայտնաբերման գործում)։ «Պարզակերպների» դասերի բաժանումը։

3. Կանաչ եվգլենայի ուսումնասիրությունը աղյուսակով։ Կանաչ եվգլենայի տեսակային անվան պարզումը. Եվգլենայի կառուցվածքը։ Եվգլենայի նմանությունը միաբջիջ ջրիմուռի—խլամիդոմոնադի հետ և տարբերությունը։ Եվգլենայի սնման առանձնահատկությունները։

4. Ցեղրակացություն.—Կանաչ եվգլենան նման է թե բույսերին և թե կենդանիներին։

5. Միկրոսկոպի տակ դիտել կենդանի կամ նկարված կանաչ եվգլենան։ Նկարել տետրերում նրա կառուցվածքը։

6. Դասի վերաբերյալ ընդհանրացնող հարցեր։

7. Տնային - աշխատանք.—կարդալ դասագրքից § 3 և § 6 (մինչև «բուսական ու կենդանական աշխարհի ազգակցական կապը») և կարողանալ պատմել։

Պլանը կարող է ուսուցչի կողմից գրի առնվել ավելի մանրամասն։ Այսպես, բերված առաջին որինակից դասի ժամանակ աշխատանքի յերրորդ մոմենտը կարելի յե գրի առնել հետևյալ ձևով՝

Ցեռանիշ թվի բաժանվելը յերկանիշ թվի վրա, յերկանիշ քանորդով, յերբ հարյուրավորներն ու տասնավորները կազմում են բաժանարարից մեծ թիվ.

$$912 : \frac{24}{38}$$

լուծել յերեխաների հետ հետևյալ որինակները.

$$864 : \frac{36}{24}, \quad 792 : \frac{22}{36}, \quad 6975 : \frac{75}{93}.$$

Լուծել 4408 : $\frac{58}{76}$ օրինակը և բացատրել քառանիշ թվի բաժանվելը յերկանիշ թվի վրա, յերբ հաղարավորները և հարյուրավորները կազմում են բաժանարարից փոքր թիվ և բաժանման ժամանակ պետք է լինում վերցնել յերեք կարգ։

Լուծել օրինակներ.—հնգանիշ թվերի բաժանվելը յերկանիշ թվի վրա՝ յեռանիշ քանորդի դեպքում.

$$41424 : \frac{48}{863}$$

Ցեղրակացություն.—Ինչպես բաժանել բազմանիշ թիվը յերկանիշ թվի վրա։

Դասի կոնսպեկտ կազմելը շատ ոգտակար է ծրագրի դժվար բաժիններն ուսումնասիրելիս և հատկապես սկսնակ ուսուցչի աշխատանքի առաջին շրջանում։

Դասերի կոնսպեկտ կազմելուն դիմում են և մանկավարժական գործի վարպետները։ Բայց ամեն մի առանձին դեպքում դասի մանրամասն պլան կազմելը վորոշում է ինքն ուսուցիչը առանց դպրոցի վարչության հատուկ պահանջների։ Պարտադիր կերպով յուրաքանչյուր ուսուցչից պահանջվում է միայն դասի համառոտ պլանը։

Ինչպես յերևում է բերված օրինակներից, դասի պլանը կազմվում է առանց վորևե գրաֆների և սյունյակների, համատարած գրության ձևով։

Դասի պլանի վերջում կարելի յե գրել այն աշակերտների աղգանունները, վորոնց ուսուցիչը մտադիր է հարցնելու դասի ընթացքում, նույնպես և նշումներ անել պլանով նշված աշխատանքի կատարման մասին։

Դասի կահավորման և աշխատանքի մեթոդների մասին պլանում առանձին չի նշվում, դրանք մտնում են դասի ընթացքի գրանցման ընդհանուր տեքստի մեջ։

Միաժամանակ յերկու դասարանի հետ պարապող ուսուցիչը դասի պլանը կազ ելով, պետք է ցույց տա միաժամանակ իր անմիջական աշխատանքը աշակերտների հետ և նրանց ինքնուրույն պարապմունքները թե մեկ և թե մյուս դասարանում։

Այդպիսի դասի պլանը կարելի յե կազմել մոտավորապես հետևյալ ձևով։

I դասարան

Մայրենի լեզու

Դասի թեման.—Գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերի ուղղագրությունը՝ բ—փ, գ—ք, դ—թ, ձ—ց, ջ—չ։

1. Ինքնուրույն արտագրություն գրատախտակից. բուրդ, փայտ, գյուղ, քաղաք, դանակ, թուղթ և այլն։

2. Աշակերտների ինքնուրույն աշխատանքի ստուգում. վանկերի հնչյունական վերլուծություն։

Գրատախտակի վրա գրության և արտասանության համեմատություն.—

Ցեղրակացություն.—մարդ—մարթ, վարդ—վարթ, արտասանվում է «թ», իսկ գրվում է «դ»։

Ընթերցում և տեքստի վերլուծություն, դասագիրք էջ.....

Տան առաջադրանք—արտագրել տեքստը։

Գրատախտակից արտագրել կանոնը։

III դասարան

Թվաբանություն

Դասի թեման.—Ծանոթացնել մասերի հետ՝ 1/2, 1/4, 1/8 և գտնել մասը ամբողջ թվից։

1. Գծագրի և դիտողական պարագաների միջոցով ծանոթացնել մասերի առաջանալուն՝ 1/2, 1/4, 1/8։ Ծանոթացնել մասերի գրելու հետ։ Ամբողջից մասեր գտնելու վերաբերյալ օրինակների լուծում։

2. Ինքնուրույն գծագրել գծեր և ուղղանկյուններ ու բաժանել դրանք յերկու, չորս և ութ մասերի։ Գրել մասերը։ Օրինակների լուծում ամբողջից մաս գտնելու վերաբերյալ (ինչի յե հավասար կես մետրը, քառորդ մետրը և այլն)։

3. Աշակերտների ինքնուրույն աշխատանքի ստուգում։

Տան առաջադրանք.—լուծել օրինակներ և խնդիրներ №_____։

Միաժամանակ յերկու դասարանի հետ աշխատելիս ոգտակար է մոտավորապես նշել ժամանակը աշխատանքի յուրաքանչյուր ետապի նկատ ամբ։

Դասին պատրաստվելով, ուսուցիչը պետք է հիշի, վոր ուսուցման պրոցեսը միաժամանակ հանդիսանում է և աշակերտների դաստիրակության պրոցեսը։ Այդ պետք է արտացոլվի և դասերի պլաններում։

Այսպես, օրինակ.—Աշխարհագրության դասի պլանը IV դասարանում «Դնեպրոգես» թեմայով կարող է պատկերացվել հետևյալ կերպ.

1. Հարցումներ աշակերտներին։

2. Դասատուն պատմում է Դնեպրի սահանքների և Դնեպրոգեսի կառուցման մասին։ (Պատմելիս բերել ցայտուն որինակներ առաջացած դժվարությունների հաղթահարման վերաբերյալ Դնեպրոգեսի կառուցման ընթացքում։ Ցույց տալ շինարարության հերոսներին, բացատրել Դնեպրոգեսի կառուցման նշանակությունը սոցիալիստական տնտեսության համար և այլն)։

Քարտեզի և նկարի վրա ցույց տալ, թե վորտեղ է կառուցված Դնեպրոգեսը։

3. Կարդալ Մարշակի բանաստեղծությունը «Պատերազմ Դնեպրի դեմ»։

4. Յեզրափակիչ զրույց, թե ինչպես կոմունիստական կուսակցության և աշխատավորության առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ հաղթահարվում և վերափոխվում է բնությունը՝ սոցիալիստական հայրենիքի ոգտին։

5. Տան առաջադրանք։—պատրաստել դասագրքից «Դնեպրոգես» հոդվածի շարադրությունը։

Այսպիսով դաստիարակչական աշխատանքը, վոր ուսուցիչը կատարում է դասի ընթացքում, նախատեսվում է դասերի ընդհանուր պլանում, դրանց բովանդակության բացահայտման կապակցությամբ։

Դասերի պլանները կազմելու համար ուսուցիչը պետք է ունենա առանձին տետր։ Այդ տետրերում դասերի պլանները գրացվում են ըստ դասարանական պարապմունքների ցուցակի։ Դասի ժամանակ պլանը պետք է լինի ուսուցչի ձեռքում։

Դպրոցի դիրեկտորը (վարիչը) և ուսումնական մասի վարիչը պետք է սիստեմատիկաբար ստուգեն ուսուցիչների պլանները, իսկ վոր գլխավորն է, ստուգեն, թե ինչպես են դրանք պրակտիկայում կիրառվում, և այդ կապակցությամբ ոգնեն ուսուցիչներին նրանց աշխատանքում։

Անկախ դասերի պլանները կազմելուց, ուսուցիչները պարտավոր են ամեն որ, յուրաքանչյուր դասից հետո դասամատյանում համառոտակի գրանցել անցած նյութը և տնային առաջադրությունները։

Յուրաքանչյուր քառորդի վերջում ուսուցիչները հաշվետու զեկուցումներ են անում մանկավարժական խորհրդին (խորհրդակցությանը)—քառորդի համար սահմանված ուսումնական նյութի կատարման մասին։

Մանկավարժական խորհուրդը (խորհրդակցությունը) ուսուցիչների հաշվետվությունների հիման վրա վորոշում է ընդունում, վորտեղ նշում է յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքի մեջ յեղած նվաճումներն ու թերությունները և միջոցառումներ է նախագծում ուսումնա-դաստիարակչական աշխատանքի հետագա լավացման համար։

ԱԳԲԽՍՀ Լուսժողկոմատի տարրական և միջնակարգ դպրոցների Վարչության պետի տեղակալ՝ Գ. ՄԱՄԵԴՈՎ

Ц. 1940 г.
Акт № 199
Вклад. л.

<< Ազգային գրադարան
NL0228332

47.920
3358-
Арм.
3-3950

Управление Начальных и Средних Школ НКП АзССР

О ПЛАНИРОВАНИИ РАБОТЫ В ШКОЛЕ

Издание Наркомпроса АзССР
Баку—1940